

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԳՈՅԱՏԵՒԷ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Արեւմտեան կիսագունդ հաստատուած հայութիւնը մարդկային աւելի լայն իրաւունքներով, աւելի հանգստաւէտ կենցաղով եւ ապահովուած ապագայով, որքան ալ ինքզինք աւելի գերադաս զգալով վերէն նայի երէկուան իր մերձարեւելեան բնակավայրերուն՝ ազգային տեսակէտով Արեւմուտքը շատ բան կը զիջի Արեւելքին: Պարսկաստան, Եգիպտոս, Սուրիա եւ յատկապէս Լիբանան հաստատուած հայութիւնը տնտեսական ու մշակութային գետնի վրայ նախանձելի վիճակի մը հասած էին՝ իրենց ազգային հարստութիւններով, եկեղեցիներու, դպրոցներու եւ միութենական ու կուսակցական հաւաքավայրերու լայն ցանցով մը: Կուսակցութիւններն ու միութիւնները բազմաճիւղով էին եւ իրենց այլազան գործունէութեամբ իրարու հետ կը մրցէին, երբեմն գերազանցելով նոյնիսկ տեղական կազմակերպութիւնները:

Կենսունակութեան այս նախանձելի շրջանին յատկապէս լիբանանահայութիւնն էր որ աւին եւ ուղղութիւն կը ջամբէր Սփիւռքին: Բոլոր կուսակցութիւններու եւ միութիւններու կեդրոնական մարմինները Լիբանան կը գտնուէին: Բացառութիւն էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որուն կեդրոնը նիւթական ապահովութեան նկատումներով նախ ժընեւ, ապա Նիւ Եորք եղած էր, սակայն անդամակցութեան հոծ շարքերով, դպրոցական ցանցով, մասնով ու մտաւորական առաջնորդութեամբ Լիբանանն է եղած Ն. Բ. Ը. Միութեան ալ համաշխարհային ողնասիւնը: Պէյրութի թաղային եւ երկրորդական քաղաքներու շուրջ երկուտասնեակ մասնաձիւղերով, սեփական վարժարաններու ցանցով, մարզական ու մշակութային ակումբներով եւ շուրջ 20,000 անդամներով՝ Ն.Բ.Ը. Միութիւնը ծանրակշիռ ու յարգուած մեծագոյն միութիւնն էր: Իր գործունէութիւնը համալիբանանեան էր: Տարին անգամ մը՝ Նոկտեմբեր ամսոյն կատարուող «Մշակոյթի Օր»ը հարիրաւոր երիտասարդ-երիտասարդուհիներ անխտիր ամբողջ հայութեան դռները զարնելով հանգանակութիւն կը կատարէին: Պաշտօնի վրայ ըլլալու, ծառայելու մրցակցութիւն կար, եւ այդ մրցակցութիւնը կ'արդիւնաւորուէր ընտրութիւններով: Իւրաքանչիւր մասնաձիւղ իր վարչութիւնը կ'ընտրէր ընդհանուր ղեկավարութեան տակ - Լիբանանի Շրջանային Յանձնաժողովին: Ահա այդպիսի ռամկավարական դրութեամբ կը կատարուէր Լիբանանի եւ ինծի ծանօթ գաղութներու Ն.Բ.Ը. Միութեան կեանքը: Բացառութիւն կը կազմէր շրջանային Յանձնաժողովը, որուն անդամները կը նշանակուէին Կեդր. Վարչութեան կողմէ, եւ որ իր կարգին, ընտրուած մարմին մըն էր: Շրջանային Յանձնաժողովներու նշանակման երեւութապէս այս ոչ-ռամկավարական գործընթացը եւս կարելի է օրինական նկատել, հիմնուելով այն իրականութեան վրայ որ անոնք կը նշանակուէին ընտրուած օրինաւոր գերագոյն ղեկավարութեան՝ Կեդր. Վարչութեան կողմէ: Այս պարագային ուղղակի ընտրութեան փոխարէն անուղղակի ընտրութիւնն էր կիրարկուած ձեւը:

Լիբանանի կրթական յանձնախումբը կը վերահսկէր Լիբանանի Ն.Բ.Ը. Միութեան դպրոցական ցանցը՝ յանձանձելով անոնց պիտաճէի մեծագումար բացերը. իսկ իր հսկողութենէն դուրս մնացող բազմաթիւ վարժարաններու նիւթական նպաստ կը յատկացնէր եւ կամ միութեան կողմէ վճարուած ուսուցիչներ կը տրամադրէր:

Կրթական այս ընդարձակ գործունէութեան կողքին չէր անտեսուած նաեւ դասական բարեգործութիւնը՝ ժողովուրդի տրամադրութեան տակ դնելով ձրի դարմանատուներ եւ դեղորայք, եւ ի հարկին, ուղղակի դարմանական նպաստ:

Տարիներու փորձարութեամբ զինուած, եւ սփիւռքահայութեան հետզհետէ զօրանալուն գիտակ' Վ.Բ.Ը.Մ.-ը իր գործունէութիւնը կեդրոնացուց կրթական մարզի վրայ, ամէն կարեւոր հայ գաղութի մէջ բանալով իր սեփական վարժարանները: Այսօրուան սփիւռքը շատ բան կը պարտի Վ.Բ.Ը. Միութեան: Ազգապահպանումի հիմնական ճիգին մէջ անփոխարինելի դեր կատարեցին ու կը կատարեն տակաւին Վ.Բ.Ը. Միութեան սեփական վարժարանները, որոնք կը կոչուին Մելգոնեան Կրթական Վաստատութիւն, Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրդ. Վարժարան, Դարուի Յակոբեան Աղջկանց Երկրդ. Վարժարան, Ալեք եւ Մարի Մանուկեան, Նազարեան, Տէմիրճեան, Կարմիրեան, Գալփաքեան վարժարաններ, եւայլն:

Իսկ ի՞նչ է պատկերը այսօր:

Բացառութեամբ մի քանի մասնաճիւղերու, Վ.Բ.Ը. Միութեան անդամակցութիւնը վերածուած է անուանական, անգործօն զանգուածի մը, հին յիշատակներով տակաւին ինքզինք Բարեգործականի կապուած զգալով: Միութիւնը կորսնցուցած է համագաղութային հանգամանքն ու կեդրոնացեալ դրութիւնը՝ տեղի տալով տեղայնական եւ անհատական ըմբռնումով ու ճաշակով առաջնորդուող գործելակերպի մը, որ յաճախ կը հակասէ միութեան համահայկական հանգամանքին եւ տեսլականին: Տեղական մասնաճիւղերով եւ Շրջանային յանձնախումբերով ստեղծուած համագաղութային կապը գոյութիւն չունի ներկայիս: Ասոր համար է որ վաստակ ու հանգամանքներ կը մոռցուին ու կ'անտեսուին՝ տեղի տալով յուսախաբութեան, դառնութեան ու անտարբերութեան:

Ներկայիս, այս փառաւոր անցեալ ունեցող միութիւնը վերածուած է հիմնադրամի մը, կամ «քորփորէյշըն»ի մը, որուն տէր-տնօրէնները, բացառութեամբ մի քանի յարգելի անձնատրութեանց, իրենք զիրենք միայն կը ներկայացնեն, քանի որ չունին այդ բարձրագոյն դիրքի վրայ ըլլալու ո՛չ վաստակը եւ ո՛չ ալ անդամակցութեան ուղղակի կամ անուղղակի քուէն: Անոնցմէ ոմանք հայերէն իսկ չեն գիտեր, հաղորդ չեն ազգային կրթական կեանքին, եւ սակայն կը համարձակին սփիւռքահայ կրթական կեանքին ճակատագրով խաղալ՝ նիւթական անբաւարարութեան, կամ անարդիւնաւտութեան պատճառաբանութեամբ վարժարաններ փակելով, իբրեւ վերջին թիրախ ունենալով Մելգոնեանը:

Սուտ ու սխալ են Մելգոնեանի փակումը արդարացնել փորձող պատճառաբանութիւնները, թէ Մելգոնեանը իր առաքելութիւնը չի կատարեր եւ մեծ ծախսերու կ'ենթարկէ Միութիւնը: Տուրի պաշտամունքի երկրպագուները պարզապէս հմայուած են Մելգոնեանի կալուածներու բերելիք մի քամի հարիւր միլիոն տոլարով: Վակառակ իրենց կեղծ ու սխալ կարծիքին, Մելգոնեանը կը մնայ սփիւռքի լաւագոյն վարժարաններէն մէկը, որուն առջեւ հայութիւն ջամբելու նոր հորիզոններ ալ բացուած են: Գալով պիտճէի հարցին, կիպրահայութեան հանգուցեալ ներկայացուցիչ՝ Արամ Գալայճեանի եւ Վայկաշէն Ուզունեանի նախաձեռնութեամբ, Լառնաքա-Լիմասոլ ճամբաներու եռանկիւնին վրայ շինուած խանութներն ու գրասենեակները տարեկան 550,000 տոլար վարձք կը բերեն, որ սակայն, հաշուակալական անընթացելի տրամաբանութեամբ, Վ. Բ. Ը. Միութեան ընդհանուր պիտճէին մէջ կ'արձանագրուի, փոխանակ Մելգոնեանի: Եւ տակաւին, Նիկոսիոյ մէջ կեդրոնական դիրք ունեցող Մելգոնեանի 16,000 քառ. մետր հողամասը շահագործումի նոր ու մեծ կարելիութիւններ ունի, սակայն ներկայ «ղեկավարները» մանրութիւններու փոխարէն կը նախընտրեն Մելգոնեան կալուածին մեծագումար վաճառքը:

Մինչ այս յօդուածը մաքրագրելու աշխատանքին վրայ էի, ուրախ լուրը հասաւ, թէ Կիպրական դատարանը արդար վճիռ արձակած է Մելգոնեան Կրթական Վաստատութիւնը փակելու եւ ծախսելու դէմ:

Մելգոնեանի յուղարկւորութեան կազմակերպիչ՝ Կորտըն Էնտըրսըն իր «առաքելութիւնը» աւարտած նկատելով, արդէն Աթէնք ուղղուած է հոն եւս փակելու հմար Ն.Բ.Ը.Մ.-ի հոգատարութեան տակ գտնուող Գալփաքեան վարժարանը: Բայց յունահայութիւնը, որուն համայնքային կազմակերպութիւններու ղեկավարման մէջ մեծ թիւ կը ներկայացնեն Մելգոնեանցիները, վստահաբար, մէկ մարդու պէս ոտքի ելած՝ արգելք պիտի հանդիսանան Կորտըն Էնտըրսըններու նոր «առաքելութեան», մեծապէս յուսախաբ ձգելով հայ դպրոցներ թաղելու յուղարկւորութեան արարողապետները:

Մելգոնեանի փակման դէմ տրուած վճիռին համար խորապէս շնորհակալութիւն յայտնելով կիպրական արդարադատութեան, կը շնորհաւորենք նաեւ քաջարի եւ արդարակորով Պատրիարք Մեսրոպ Արք. Մուրաֆեանն ու Սփիւռքի հազարաւոր Մելգոնեանցիները, որոնց կազմակերպած բազմաթիւ կորիզները Պատրիարք հօր հետ միասնաբար ու հետեւողական պայքարով, այս ազգավնաս որոշումին արգելք հանդիսացան:

Կը սիրենք յուսալ նաեւ որ Ն.Բ.Ը. միութեան ներկայ ղեկավարութիւնը այս առթիւ հարկ եղած դասը քաղած ըլլայ, հիմնովին վերատեսութեան ենթարկելու համար իր ազգավնաս ուղեգիծը, եւ կամ իր տեղը զիջելու ուրիշներու, որոնք գիտակից են սփիւռքահայութեան գոյատեւման կարեւորութեան՝ հայ վարժարաններու միջոցաւ նոր սերունդները զինելով հայերէն լեզուով, հայու ոգիով եւ հայ ապրելու վճռակամութեամբ ու պարտաւորութեամբ:

16 Յուլիս, 2005 Մոնդրէալ